



գերահամար էրս Գորին Ի լուր խորը Ազգայնոց՝ դէժ առ յորդոր լինելոյ ամենեցուն փութալ այսու օրինակաւ կանխել Ի նուիրարարխութիւնս փոխանակ մեծածախ հացկերութի հանգստեան հոգեոց, յօգուտ և Ի պայծառութիւն սրբոյ Էջմիածնի միակ տեղւոյն պարծանաց Ազգիս Հայոց, նոյնպէս Եկեղեցեաց և Գարոցաց, որով արդարեւ Ազգս մեր միայն կարէ պանծալ Ի փառս կրօնական և Ազգային յառաջադիմութեան օր քան զոր:

Փոխանորդ Թեմակալին Երևանայ

ՄԵՍՐՈՎԱԲ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՄԲԱՏԵԱՆՑ:

Յ 5 Մարտի 1870

Երևան

ԽՅՈՒՄՈՒՆԻՏԻՆ ԱՐԱՐԱՅ ԱՄԱՌՈՒՅ:

Հոգարարձուն Ատարխանայ Հայոց Հոգեւոր Դպրոցաց, Յարգոյ Յովհաննէս Գրիգորեան Պ. Սարգսեանց, Ազգային ջերմեռանդութենից շարժւած Գարոցների բարեկաւութեանը ըղձալով՝ նուիրեց Ի նպաստ դպրատներին մի հարիւր ռուբլի արծաթ դրամ, ցանկալով կրել իւր վերայ կոչումը ԲՐԷԷՄՈՒՆԻՏԻՆ, Վասնորոյ Հոգարարձութիւնը նոյն Գարոցների՝ ընդունելով նուիրագործեալ գումարը Պարոն Սարգսեանցէն՝ նշանաւորեց նորա անունը կոչումով ԲՐԷԷՄՈՒՆԻՏԻՆ, և յայտնեց իւր կողմանէ զբաւոր գոհունակութիւն, Ուստի Արարատ ամսագրոյ միջոցաւ կ'իւրեմայ հրատարակել նոյն Պարոնի ազգօգուտ նուիրատուութիւնը, լիայոյս լինելով՝ որ շատերը համազգայիններից կ'նախանձաւորին նորա այս օրինակ բարեկամութեանը, և չեն զանալ իւրեանց համակրութիւնը ցոյց տալ Ազգային Գարոցներին, որոնք յատուկ միջոցն են ազգի յառաջադիմութեան:

Հոգարարձութ՝ Աւագ Քահանայ Յովսէփ Բունիաթեանց:

Բրիտանիո Բաղաշեանց:

Սարգիս Բուրջալեանց:

Սիմէօն Պապովեանց:

Գրիգոր Սողոմօնեանց:

Թ. 38

Ի 24 Փետրվարի 1870

Ատարխան:

ԽՅՈՒՄՈՒՆԻՏԻՆ ԱՐԱՐԱՅ ԱՄԱՌՈՒՅ:

Անցեալ միջոցներում պատահեց ինձ իմ անձնական գործով զնալ Փամբակաձոր գաւառը, բայց ճանապարհին մասնաւոր տկարութիւն զգալով անձիս մէջը, ստիպուեցայ դադարեցուցանել շարունակութիւնս և շեղուելով ճանապարհից, կամեցա՛հ հանդել այն մերձակայ գիւղում, որ անուանւում էր Որդնաւ,՝ գոցէ Վարդաձոր". և մինչ այն դիւրի եկեղեցւոյ պարսպի մօտով անցանում էի, լսեցի յանկարծ մի քանի իրար խառնուած ձայն, որոնք երգում էին հայերէն, նորանց ձայնի դաշնակաւոր հնչմունքը շարժառիթ եղաւ իմ տկարութեանս մոռանալուն՝ դիմել փութացայ այն տուն, որից լսվում էր այն ձայնը. ներսմտնելով տեսայ որ յիսունի չափ երեխայք նստած ուսանում են. յետ սովորական ողջունին նորանց վարժիչ Գրիգոր Տ. Բաղդասարեանցի հետ, նստեցի. երգիչներ աւարտելով այն երգը՝ ուրիշ երկու երգեր էլ երգեցին. յետոյ հետաքրքրութեամբ ուղեցի իմանալ այն աշակերտների ուսանելի առարկայքը, որոնցից մի քանիսը, սովորում էին Ազգային և Սրբազան պատմութիւններ. մնացեալքը, պարսպումէին հասարակ ընթերցանութեամբ, և զլիաւորապէս զարմացայ այն ռամիկ ժողովուրդի դէպ ի ուսումնասիրութիւն ունեցած ջանքը, որ այդպիսի մի աննշան տեղում՝ ուսման ճրագը սկսել է մասնաւորաբար լոյս տալ. էս միջոցին, բարեբաղդաբար, ներս մտնան Հոգարարձութեան երկու անդամները, որոնք լցուցին իմ հարցասիրութեան փափագը այն ուսումնարանի հանգամանաց մասին. նոցանից մէկին, Յովհաննէս Զաքարեանին, խնդրեցի տեղեկութիւն տալ ինձ, այդ Գարոցի վաղուց հիմնաւորութեան կառավարութեան և որպիսութեան մասին. յիշեալ պարոն պատասխանեց ինձ այսպէս.

Մեր հասարակութիւնից մի անձն, Բաղդասար Տէր Բաղդասարեանց անունով հիմնել է այս դպրոց և նորան պատկանում է սա. սորանից 40 տարի առաջ մինչդեռ մենք Տաճկաստանումն էինք, պարոն հիմնադրի պապը Բաղդասար Քահանայն ունեցել է մի հրաշալի Աւետարան, և ուսաց առաջին պատերազմին, երբ Ալաշկերտու և Բաննու բնակիչներ զաղթեցին Ռուսաստան, յիշեալ Քահանայն Աւետարան իւր հետ բերեց. և նորա մահից յետոյ, Աւետարանի ուխտաւորներ, առատնուէրք.